

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

## «ԱԿՆ» ԿԵԴՐՈՆԻ ՏՆՕՐԷՆ, ՆՈՅՆԱՆՈՒՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ, ԵՐԱԺԻՇՏ ԱՐԱՄ ՔԵՐՈՎԲԵԱՆԻ ՀԵՏ

«ԱԿՆ» եկեղեցական երգերու երգչախումբը Սեպտեմբեր 3ին մասնակցեցաւ Իտալիոյ մէջ Չիթթա տի Քաթելլօ քաղաքի Ազգերու տարեկան փառատօնին, որ նուիրուած էր հայկական երաժշտութեան եւ հայ երաժիշտներու գործերուն: Խումբի ղեկավար Արամ Քերովբեան, երաժշտագէտ, Փարիզի Սուրբ Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցոյ երաժշտապետ, կը թիավարէ հոսանքն ի վեր, պաշտպանելով հայ եկեղեցական երաժշտութեան աւանդական միաձայն երգեցողութիւնը: Երեսուց ընդ, որ 20րդ դարու երկրորդ կէսին արդէն եկեղեցականներու եւ երաժիշտներու կողմէ իբր յետադիմական դիտուելով՝ առանց շատ հարցադրումի բազմաձայնութեան վերածուելու ընթացքի մէջ է:

«Նոր Յառաջ» - Վերջերս լոյս ընծայած էք նոր սալիկ մը նուիրուած «Յարութեան» շարականներու: Արդէն «ԱԿՆ» երգչախումբի կողմէ պատրաստուած շարականներու նուիրուած սալիկներու շարքին հինգերորդն է: Ի՞նչ նպատակ կը հետապնդէ նման սալիկներու պատրաստութիւնը:

**Արամ Քերովբեան** - «ԱԿՆ» կեդրոնը - ինչպէս արդէն ըսիք - հինգ սալիկ արձանագրած է եւ վեցերորդ մըն ալ արդէն պատրաստուած է Վենետիկի Մարիթարեան Հայրերէն Հայր Վրթմանէս Ուուհոճեանի գործակցութեամբ, զոր արտադրած է Վենետիկի Մշակութային Կեդրոնը: Ասիկա տարիներու ընթացքին իրականացուող շարունակական, հետազօտական եւ փորձառական աշխատանք մըն է: Այժմ պատրաստութեան ընթացքի մէջ է «Հանգստեան» շարականներու շարքը, որ անշուշտ մեր կարելիութեան սահմաններուն մէջ պիտի փորձենք արձանագրել մօտ ապագային:

«ՆՅ» - Այս սալիկները ինչպէ՞ս կ'ընդունուին հայ թէ օտար ունկնդիրներուն կողմէ:

**Ա.Ք.** - Նախ ըսեմ որ անոնք ուղղուած են որոշ կաղապարներէ դուրս երաժշտութիւն ունկնդրելու պատրաստակամութիւն ունեցող անձերու, ըլլան անոնք հայ թէ օտար: Մենք կը ջանանք անկեղծօրէն բան մը փոխանցել...: Ընդհանրապէս հարցը ցրուածին կը վերաբերի, նկատի ունենալով որ մենք ցրուիչ չունինք՝ «ԱԿՆ»ի կայքէջէն, համացանցէն, ծանօթներու միջոցաւ եւ վերջապէս համերգներու, ներկայացումներու ընթացքին կը ցրենք մեր սալիկները ո՛չ միայն Ֆրանսա, այլեւ եւրոպական քաղաքներ ու Միացեալ Նահանգներ: Յայտնեմ, որ Հայաստանի մէջ - Թուրքիոյ բաղդատած - ցրումի գործընթացը չափազանց սահմանափակ է:

«ՆՅ» - Ծարակաւնեք ընդհանրապէս կը ներկայացնեն եկեղեցական աւանդութիւն մը, իսկ այսօր «ԱԿՆ»ը եկեղեցական համակարգէն դուրս խմբակցութիւն մըն է որ այդ

ուղղութեամբ կ'աշխատի: Այս երեսուց ինչպէ՞ս կ'ընկալուի եկեղեցական համակարգին կողմէ:


**Ա.Ք.** - Եկեղեցական համակարգը կարծէք մոռցած է իր բնոյթին մէկ տարրը՝ հանդիսացող արեւելեան մօտեցումներով աւանդական երաժշտութիւնը, եւ զայն դուրս ձգած է իր մշակութային հարստութենէն, որուն հետեւանքով ալ կը սկարանայ նաեւ հասարակաց յիշողութիւնը: Այսու կը յանգինք այն եզրակացութեան որ Հայաստանեայց եկեղեցոյ համար կարեւորութիւն չունի աւանդական երաժշտութեան ուսուցումը: Անշուշտ անոնք կը սորվեցնեն երգեր, կ'ուսուցանեն նոթագրութիւն, բազմաձայն երգչախումբային կատարումներ, սակայն աւանդական ձայնեղանակները կամ դուրս կը մնան իրենց ծրագիրներէն կամ ալ արեւմտեան մօտեցումներով կ'ուսուցանուին: Ահաւասիկ սկիզբէն ի վեր «ԱԿՆ»ի անկախ աշխատելուն պատճառը, որ աւելի քան 25 տարի է ի վեր կը գործէ եւ կը շարունակէ իր երթը:

«ՆՅ» - Դուք անդրադարձաք ձայնեղանակներու վերաբերեալ արեւմտեան կամ արեւելեան մօտեցումներուն: Կրնա՞ք, թէկու՞ր հակիրճ, բացատրութիւն մը տալ արեւելեան եւ արեւմտեան մօտեցումներուն: Իսկ այդ ամբողջ դասաւորումին մէջ ի՞նչ տեղ կը գրաւեն այսպէս ըսենք «պոլսական» մօտեցումները:

**Ա.Ք.** - «ԱԿՆ»ի մօտեցումները «պոլսական» չեն, որովհետեւ - դարձեալ ինչպէս ընդհանուր հայկական ազգային երաժշտութեան հասկացողութիւնը - կը յարի արեւմտեան հասկացողութեան, ասոր հակադրող արեւելեան հասկացողութիւնն ալ կը հակի դէպի օսմանեան դասական երաժշտութիւններու ընտանիքին մէջ այսօր լսուող եւ քիչ թէ շատ թրքական միջավայրի մէջ պահուած ձեւին մօտեցող մեկնաբանութեան, եւ հետեւաբար այս երկուքին մէջտեղ ընտրութիւն մը չի մտածուիր, փնտրուուք չի կատարուիր: Պարզ խօսքով արեւելեան

ձայնեղանակներով կատարումները թրքական կը նկատուին, իսկ արեւմտեան ձայնեղանակներով կատարուածը արեւմտեան կամ ազգային երաժշտութիւն կը սեպուի: «ԱԿՆ» ընտրած է ո՛չ մէկը եւ ո՛չ ալ միւսը, այլ ան կը փնտռէ թէ այդ երաժշտութենէն ի՞նչ կը սորվինք մենք, ան որպէս ձայնեղանակային կառուց ի՞նչ կը բովանդակէ, ի՞նչ կ'արտացոլեն գրաբարով երգուած եղանակները, որովհետեւ նոյն ձայնով բայց յունարէնով, թրքերէնով կամ քրտերէնով երգուած երգերը գրաբարով երգուած ատեն պիտի «չստացուին», ուրեմն պէտք է երգացանկէն գտնել իր արտայայտչական յատուկ լեզուն՝ արեւելեան ձայնեղանակներու համակարգին մէջ, որ ձայներու յատուկ դասաւորումի մտայնութիւն կամ մեթոտ մըն է եւ ո՛չ թէ ձայնաշարեր, որոնք նոյն ձեւով կը գործածուին բոլորին կողմէ:

«ՆՅ» - Դուք խօսեցաք արեւմտեան մտայնութեան եւ արեւելեան երգարուեստի մօտեցումներուն մասին,



ուր այս վերջինը կը հասկցուի իբրեւ օսմանեան երաժշտութիւն: Իսկ այդ դասաւորումներուն մէջ ո՞ր կը գտնուի հայկական երգարուեստը:

**Ա.Ք.** - Ես կը պնդեմ ու կը շեշտեմ թէ հայկական բացարձակապէս կը գետեղուի արեւելեան ձայնեղանակներու համակարգին մէջ, բայց ո՛չ թէ արեւելեան կապուածի գծով: Յատկապէս 19րդ դարու վերջին քառորդէն սկսեալ Պոլսոյ գերիշխող միջավայրին ազդեցութեամբ հետզհետէ կորսուած կարգ մը յատկանշական գիծերը վերստին փնտրելու կամ նուազագոյնը անոնց մօտենալու ջանք մը պէտք է թափուի: Իսկ ընդհանուր առմամբ ինչ որ այսօր Պոլսոյ մէջ կը կատարուի եւ քիչ մը թրքերէնի պէս ալ կը հնչուի յաճախ, շատ աւելի մօտիկ է աւանդական հասկացողութեան, քան թէ մարդուած եւ փայլուն ձայներով (երբեմն ալ բազմաձայնութեամբ) երգուած եղանակները, որոնք իրարու յաջորդող ձայներ են, բայց ո՛չ ձայնեղանակ, եւ լեզուն ալ արդէն դժուար կը հասկցուի:

«ՆՅ» - Եթէ ուզենք որոշել հայկական եկեղեցական միաձայն երաժշտութեան իրապատկութիւնը, ի՞նչ է անոր բնորոշիչ կէտը, յատկապէս ինչ կը վերաբերի շարականներուն:

**Ա.Ք.** - Մենք մասնաւորաբար կ'ուսումնասիրենք շարականները,

որոնք տիպար եղանակներու վրայ հիմնուած են եւ շատ սերտ առնչութիւն ունին լեզուին հետ, քանի որ եղանակը կը ձեւաւորուի ըստ խօսքին, կամ արձակ թէ չափաւոր գրութեան: Ինչպէս Գրիգոր Տաթեւացին կ'ըսէ՝ «շարականի մէջ խօսքը եւ եղանակը հաւասար են» եւ մենք կը փնտռենք այդ երկուքի միջեւ եղած յարաբերութիւնը: Բնականաբար միշտ չէ որ կը յաջողինք, բայց կարեւորը այդ փնտրուումն է, շարականի մէջ եղող «խօսքին» փոխանցումը թէ՛ բառացի իմաստով եւ թէ՛ ալ ապրած միջավայրի հոգեվիճակով...:

«ՆՅ» - Միջավայրի հոգեվիճակ ըսելով ի՞նչ կը հասկնաք: Արդեօք խօսքը աղօթքի՞ մասին է:

**Ա.Ք.** - Աղօթքը շատ աւելի լայն իմաստ ունի, որովհետեւ մարդ արարածի հոգեկան պահանջները - ինչ որ է՛ր հազար տարի առաջ - նոյնը մնացած են: Այսինքն եթէ երաժշտութիւնը որեւէ հոգեկան պահանջի կը համապատասխանէ արդէն ան կը սեպուի հոգեւոր երաժշտութիւն: Ահաւասիկ շարունակական այս փնտրութիւններու մէջ է «ԱԿՆ»ը:

«ՆՅ» - Արեւելեան միաձայն երգեցողութեան դրոյթները եւ հայկական շարականներու երգարուեստը ի՞նչի վրայ կը հիմնուին:

**Ա.Ք.** - Եթէ ուզենք շատ պարզ ձեւով բացատրել կարելի է ըսել թէ միաձայն, կամ աւելի ճիշդ՝ ձայնեղանակային երաժշտութիւնը շօշափելի կողմ մը ունի. ան՝ թրթռացումները իրարու հետ բնական ներդաշնակութիւն ունեցող ձայներուն կը յակի: Երբ ձայները շինծու յարաբերութիւն մը ունենան մարդ արարածը զայն կ'ընկալէ տարբեր ձեւերով: Միւս կողմէ մարդը ամէն ինչի կը վարժուի եւ հոս է որ ընտրութեան հարց կը դրուի: Մեր երգչախումբին համար ձայներու միջեւ եղած յարաբերութիւնները կը բացատրուին պարզ թիւերով, ինչ որ ունկնդիրներու վրայ այլ ազդեցութիւն մը կը ձգէ: Իսկ թէ ինչպէ՞ս շրջիլ, ինչպէ՞ս պտտիլ այս բնական ձայներու յարաբերութեան մէջ, այդ ալ արդէն իր գաղտնիքները ունի, որ պէտք է հասկնալ թէ ի՞նչպէս կարելի է մէկ ձայնէն միւսը անցնիլ, ի՞նչպէս կը կառուցուի եղանակը, ըմբռնել թէ ձայները արդեօք իրարո՞ւ կը յաջորդեն թէ մէկը միւսին ծնունդ կու տայ: Հիմնականը ո՛չ թէ եղանակն է, այլ այն՝ թէ ի՞նչ կ'ընենք այդ եղանակով, եղանակը ինչպէ՞ս կը ծնի, ինչպէ՞ս կ'ապրի:

«ՆՅ» - Այսօր ի՞նչ վիճակ կը պարզէ շարականներու երաժշտագիտութիւնը: Այս մարզին մէջ գիտաշխատողներ կա՞ն:

**Ա.Ք.** - Բարեբախտաբար քանի մը երաժշտագէտներ առարկայական-գիտական մօտեցումով

աշխատանք կը տանին՝ կարելի եղածին չափ դուրս ելլելով ազգային երաժշտութեան գաղափարախօսութիւն մշակելու մտահոգութենէն:

«ՆՅ» - Եկեղեցին ի՞նչ կ'ընէ այդ ուղղութեամբ:

Ա.Ք. - Եկեղեցին այն պահուն երբ կը խորհի թէ անհրաժեշտ է հետազօտական աշխատանքը, կը ջանայ այսօրուան դուրսի աշխարհի «կարծեցեալ արդի պահանջներուն» գոհացում տալ, այսինքն այնպէս ընել որ մարդիկ «չձանձրանան» եւ ամէն ինչ հաճելի երեւնայ...:

«ՆՅ» - Այսօր բաւարար ձայնագրութիւններ կա՞ն հետազօտական աշխատանք տանելու համար:

Ա.Ք. - Անհատական կամ քանի մը հաստատութիւններու հաւաքածոներ կան, որոնց միջոցով թերեւս կարելի է ձայնագարան մը կազմել: Մեր կեդրոնն ալ ունի արձանագրութիւններու ժողովածու մը:

«ՆՅ» - Ինչ կը վերաբերի բաւարար աւանդութեան կամ գրաւոր հետքերուն, միջնադարէն մնացած խաղաղութեան եւ 19րդ դարու վերջերուն աւելի հսկայական նոր ձայնագրութեամբ պահուած որոշ արձանագրութիւններուն, արդէտք տակաւին կա՞ն շարականներ, որոնք խնդրոյ առարկայ են իրենց մեկնաբանութեան կամ ձայնաստիճաններու ընկալումի տեսանկիւնէն, որոնք այսօր չեն համապատասխաներ գոյութիւն ունեցող ձայնեղանակներու ընդհանուր տեսութեան եւ պատկերին:

Ա.Ք. - Ատիկա կախում ունի թէ ինչպէս կը մեկնաբանենք արձանագրուած խաղերը: Օրինակ հայկական արդի ձայնագրութիւնը շափազանց պարզ կառուց մը ունի, որովհետեւ ան յորինուած է այս երաժշտութիւնը գիտցող անձերու կողմէ, յիշողութեան օգնական ըլլալու համար եւ ոչ թէ երաժշտութիւնը սորվելու համար: Իսկ այդ պարզ ձեւով գրուած նոթաներուն մէջ է որ պէտք է փնտռել թէ ի՞նչ երգուած է որ ստիպողաբար այդպէս գրուած է, քանի որ կարելի չէր երգի մը կամ ձայնի մը մէջ արտացոլուած ամէն մանրամասնութիւն արձանագրել եւ հոս է որ գրութիւնը կ'օգնէ որոշ շափով մտնելու այդ մեկնաբանութեան: Մնացեալը բանաւոր աւանդութիւնն է, որ եթէ մեռած է շատ բան կարելի չէ ընել եւ հետեւաբար այդ փնտռութիւնն ալ սահմանափակ կը մնայ: Ինչպէս 1860ական թուականներուն եղիա Տնտեսեան - որ արեւմտեան մշակոյթին մօտիկ անձ մըն էր - ժամանակին իրենց սխալը ուղղել չուզող երաժշտապետները «աւանդապահ» կը կոչէր եւ ոչ թէ «եղծող», որովհետեւ այդ մարդիկը կը պահէին ճիշդ կամ սխալ ձեւով իրենց աւանդուածը, ուրեմն եթէ անոնք անտեսուէին՝ սխալին հետ միասին ճիշդն ալ կը կորսուէր: Ան իբրեւ ուսեալ երաժշտագէտ գիտակից էր այդ իրականութեան: Իսկ

այսօր նման անձնաւորութիւններ գոյութիւն չունին:

«ՆՅ» - Իսկ Կոմիտասը, որ հայ ժողովուրդին կողմէ կուռքի վերածուած է, այս առընչութեամբ ի՞նչ մօտեցում ունեցած է:

Ա.Ք. - Գիտէք, այսպէս կոչուած «կոմիտասականներն» են որոնք զինք կուռքի վերածած են, այնպէս որ այսօր նոյնիսկ կարելի չէ տեղ մը իրապէս տեսնել թէ ի՞նչ ինչ կ'ըսէ, նկատի ունենալով որ Կոմիտասի գործը եւ անոր մեկնաբանութիւնները իրարու խառնուած են: Ըսածիս մասին փաստացի հրատարակութիւններ ալ կան:

«ՆՅ» - Կրնայի՞ք աւելի մանրամասնել:

Ա.Ք. - Կոմիտաս վարդապետ իր ապրած ժամանակի մտայնութիւնը ունէր, երբ արեւմտեան երաժշտութեան ուսում կը ստանային եւ արեւելեան երկիրներու բանահիւսութենէն տարրեր ընտրելով ու անոնց գեղարուեստական ոգի տալով կը հրամցնէին հանրութեան, քանի որ ժողովուրդին երգածը արուեստ չէր սեպուեր: Սակայն երբ ան մշակած է բանահիւսական եղանակները այն ատեն լաւ արդիւնք տուած է: Կոմիտաս վարդապետին եղանակային միջամտութիւններու (խօսքը բազմաձայնութեան մասին չէ) վրայ ըրած քննադատութիւնները շափազանց հետաքրքրական են, քանի որ ինք կարեւոր կը նկատէ ճիշդ հնչունաբանութիւնը՝ գրաբարի պարագային: Օրինակի համար, Կոմիտաս եւ Եկմալեան պատարագի նոյն աւանդական եղանակը առած են, բայց տարբեր ձեւով միջամտելով մօտեցումի տարբերութիւն ցուցաբերած են: Յամենայն դէպս այսօր գոյութիւն չունի այն միջավայրը որպէսզի կարելի ըլլայ առողջ քննադատութիւն կատարել, որովհետեւ, ինչպէս ըսիք Կոմիտաս այնպիսի կուռքի մը վերածուած է որ մեծ գնահատանքէ զատ ուրիշ բան ըսել անկարելի է: Գիտէք, տակաւին մարդիկ կան որ կ'ըսեն թէ հայ երաժշտութիւնը սկսած է Կոմիտասով... հապա անկէ առաջ եղածները: Ըսել կ'ուզեմ թէ այս աստիճան քաղաքական բռնատիրութեան թաթերու մէջ կը գտնուի նա՛եւ Կոմիտաս վարդապետ, որ իմ կարծիքով բաւական տառապած ըլլալով հանդերձ տակաւին անոր ոսկորները հանգիստ չունին իր գերեզմանին մէջ...:

«ՆՅ» - Ո՞րն էր Սովետական Հաստատանի մտայնութիւնը ընդհանրապէս հայ երգարուեստի նկատմամբ:

Ա.Ք. - Սովետական աշխարհին մէջ զանազան երեւոյթներ կան: Չմոռնանք որ եկեղեցական երաժշտութեան պարագային Սովետական Հայաստանի մէջ ամէն ինչ քարոզանդ եղած է, նոյնիսկ էջմիածնի մէջ ատեն մը Կաթողիկոսը առանձին մնացած է, իսկ քահանաներ եւ վարդապետներ քշուած են

Միպիրի խորքերը: Հետեւաբար կարելի չէ հոն որեւէ աւանդութեան մը պահպանման մասին խօսիլ, երբ ամէն բան արգիւտած էր, միայն մեր մամիկներն ու պապիկները որոշ աւանդութիւններ պահած են: Ինչ կը վերաբերի ժողովրդական երաժշտութեան, բարեբախտաբար գիւղեր եղած են, ուր գիւղացիները շարունակած են երգել եւ նոյնիսկ նոր երգեր յօրինած են: Այնուհետեւ միայն Վազգէն Վեհափառի ժամանակ էր որ միջնադարեան երաժշտական արուեստի գծով որոշ շարժում մը սկսաւ:

Իսկ այսօր Հայաստանի մտաւորականներէն շատեր այս բոլորը մոռնալով - երկիրքէն ինկած ըլլալու պէս - ինքզինքնին հազարաւոր տարիներու աւանդական եկեղեցական երաժշտութեան ժառանգորդը կը նկատեն եւ կը մերժեն պատմութեան իրականութիւնը: Ականջովս լսած օրինակ մը բերելով ըսեմ, թէ մարդիկ Միսիթարեան եղանակները Սեւանի նոր վերաբացուած վանքին աւանդութիւնը կը նկատեն, Միսիթար Աբբահօր այնտեղէն անցած ըլլալը բաւարար պատճառ մը սեպելով: Այլ խօսքով «ազգայինը» հղովելով երբեմն կ'առաջնորդուինք դէպի «երեւակայական աշխարհներ»:

«ՆՅ» - Իսկ այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ շարականագիտութիւն կ'ուսուցանուի՞:

Ա.Ք. - Ես տեղեակ չեմ այդ մասին, որովհետեւ մեր կեդրոնը գոյութիւն չունի անոնց համար, որոնք նոյնիսկ մերժած են «Ակն»ի հրատարակած սկաւառակները էջմիածնի Մայր Աթոռի գրավաճառի մօտ ընդունիլ, ըսելով թէ այդ երաժշտութիւնը իրենց ոճին չի համապատասխաներ: Միւս կողմէ, ուրախ եմ ըսելու թէ հակառակ այդ արգելքին այլ միջոցներով ժողովուրդի ձեռքը անցած է մեր սալիկները: Ըսեմ, որ Հայաստանի մէջ - բացի երաժիշտներէն, երաժշտագէտներէն ու եկեղեցականներէն - այլ արուեստագէտ մտաւորականներ՝ գրողներ, նկարիչներ, բանասէրներ, պատմաբաններ մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերեն ու կը հետեւին մեր գործին:

«ՆՅ» - Որո՞նք են «Ակն»ի ապագայի ծրագիրները:

Ա.Ք. - Նախ կ'ուզեմ շրջանցելով սովորական ցրումի միջոցները եւ օգտուելով կարգ մը հնարաւոր վարկերէ, անվճար կամ շատ չնչին գիներով մեր սալիկները հասցնել առաւել լայն զանգուածներուն Հայաստանի մէջ, բայց նաեւ Թուրքիոյ, ուր «Թաքնուած» քրիստոնեաներ կամ իսլամացած Հայեր կան, որոնք մկրտուիլ կը փափաքին եւ դուրսէն գալիք շունչի պէտք ունին: Արդ, այդ ուղղութեամբ մեր կեդրոնը կ'ուզէ ծրագրորեն մշակել:

«ՆՅ» ■

**AGIR POUR LE PAYS ARMÉNIEN**  
**Bal de soutien**  
**à l'Organisation Terre et Culture**  
**le samedi 20 septembre 2014 à Lyon**



Fontaine supérieure du village de Havay (région de Palou, Turquie), première intervention de l'Organisation Terre et Culture en Turquie (programme de la Fondation Frant Dink), 2011

**Animé par l'orchestre Souren de Paris et son DJ**  
**Cocktail dînatoire à 19h30**  
**Soirée dansante à 22h30**

Salons du Casino Le Lyon Vert de Charbonnières-les Bains  
 200, avenue du Casino, 69890 Tour de Salvagny  
 soirée entière 80€ - soirée dansante 25€

Réservations : 01 48 97 42 58  
 sectionlyon@otc-france.org

**www.terreetculture.org**



Maison traditionnelle rénovée à Kessab (Syrie du Nord), 2009